



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

«Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳԱՏՕ) ծրագիր

ԱՐՏԵԶՅԱՆ ՀՈՐԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ



Հորի տարածքը լուծարումից առաջ և հետո:
Աշխատանքների ընթացքը ներկայացնող նկարներ:

Մոտ 60 լիտր վայրկյան ջրատվություն ունեցող Միփանիկ գյուղի հորի փակման արդյունքում տարեկան կխնայվի մոտ 1.9 մլն մ³ ջուր:



Աջից ձախ՝ ԳԱՏՕ ծրագրի տնօրեն Մ. Ավետիսյանը և հորի լուծարման նախագծի կապալառու ՎԱԼՄԼ ՄՊԸ տնօրեն Վ. Պետրոսյանը: ԳԱՏՕ ծրագրի կողմից ընկերությանը տրվեց շնորհակալագիր աշխատանքների գերազանց իրականացման համար:

ԱՄՆ ՄԶԳ-ի ԳԱՏՕ ծրագրի կողմից 2017թ. հոկտեմբերին ավարտվեց Արարատի մարզի Միփանիկ գյուղի մոտակայքում գտնվող ինքնաշատրվանող հորի լուծարման նախագիծը, որն իրականացվեց ԳԱՏՕ ծրագրի՝ Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների խնդիրների լուծման ոլորտում ՀՀ կառավարությանը տրամադրվող աջակցության շրջանակում: Ի թիվս այլ գործողությունների՝ Արարատյան դաշտում իրականացվող պիլոտային ծրագրերի միջոցով, ԳԱՏՕ-ն ցուցադրում է նորարարական տեխնոլոգիաների և մոտեցումների կիրառումը ստորերկրյա ջրերի և էներգիայի խնայողության ոլորտում:

Ինքնաշատրվանող այս հորը երբևէ չէր շահագործվել համայնքի կողմից: Արտահոսող ջուրը հեղեղում էր գյուղի շրջակա տարածքը՝ բերելով դաշտերի ճահճակալման ու անանցանելի դարձնելով դեպի գերեզմանոց տանող ճանապարհը:

Տեխնիկապես չափազանց բարդ ծրագիր էր: Հորի պատյանը և խողովակի վերին հատվածը վնասված էին: Խողովակի ներքին կտրվածքը հորի ամբողջ խորությամբ լցված էր կավային գրունտով, իսկ վերին մասը՝ քարերով և բեկորներով: Աշխատանքների ընթացքում պարզվեց, որ ջրի հոսքը արտախողովակային էր. 25-35մ նիշերում հայտնաբերվեց ստորգետնյա ջրային մարմին, որը հորիզոնական ուղղությամբ տարածվում էր ավելի քան 7մ հորի առանցքից: Հեռացվեց հորի խողովակի վերնի 35մ հատվածը, խորշով անցկացվեց 12 մետրանոց պողպատե խողովակ, հոսքը կանգնեցվեց կավի պարկերով, և հորի պատյանը մշտական փակվեց ցեմենտի լիցքով: Մոտ 60 լիտր վայրկյան ջրատվություն ունեցող Միփանիկ գյուղի հորի փակման արդյունքում տարեկան կխնայվի մոտ 1.9 մլն մ³ ջուր:

Արարատյան դաշտում կան 135 չշահագործվող հորատանցքեր՝ տարեկան մոտ 35 մլն մ³ արտահոսքով: Արդյունքում, վատնվում է բարձրորակ ստորերկրյա ջրային ռեսուրսը՝ էլ ավելի խախտելով ստորերկրյա ջրատար հորիզոնների էկոլոգիական հավասարակշռությունը: Չշահագործվող արտեզյան հորերի լուծարման ծրագրերը հսկայական ներուժ ունեն՝ Արարատյան դաշտի արտեզյան ջրերի պահպանության առումով: Միևնույն ժամանակ, հորերի օպտիմալացումը կնպաստի ստորերկրյա ջրային ռեսուրսի ավելի արդյունավետ օգտագործմանը: